

«Shake» Գովազդային վիճակախաղի կանոններ

Հայտարարություն

2024թ. օգոստոսի 1-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ի 23:59 ներառյալ ուժի մեջ է մտնելու «Shake» Գովազդային վիճակախաղի կանոնների փոփոխված պայմանները:

Հայտարարություն

2024թ. մայիսի 27-ից մինչև 2024թ. հուլիսի 31-ի 23:59 ներառյալ ուժի մեջ է մտնելու «Shake»

Գովազդային վիճակախաղի կանոնների փոփոխված պայմանները:

Հայտարարություն

2024թ. մայիսի 1-ից մինչև 2024թ. մայիսի 26-ի 23:59 ներառյալ ուժի մեջ է մտնելու «Shake»

Գովազդային վիճակախաղի կանոնների փոփոխված պայմանները:

Հայտարարություն

2024թ. փետրվարի 1-ից մինչև 2024թ. ապրիլի 30-ի 23:59 ներառյալ ուժի մեջ է մտնելու «Shake»

Գովազդային վիճակախաղի կանոնների փոփոխված պայմանները:

Հայտարարություն

2023թ. դեկտեմբերի 19-ից մինչև 2024թ. հունվարի 31-ի 23:59 ներառյալ ուժի մեջ է մտնելու «Shake»

Գովազդային վիճակախաղի կանոնների փոփոխված պայմանները:

Հայտարարություն

2023թ. ապրիլի 1-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 18-ի 23:59 ներառյալ ուժի մեջ է մտնելու «Shake»

Գովազդային վիճակախաղի կանոնների փոփոխված պայմանները:

Հայտարարություն

2023թ. հունվարի 1-ից մինչև 2023թ. մարտի 31-ի 23:59 ներառյալ ուժի մեջ է մտնելու «Shake»

Գովազդային վիճակախաղի կանոնների փոփոխված պայմանները:

Հայտարարություն

2022թ. նոյեմբերի 21-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ի 23:59 ներառյալ ուժի մեջ է մտնելու

«Shake» Գովազդային վիճակախաղի կանոնների փոփոխված պայմանները:

Հայտարարություն

2022թ. հոկտեմբերի 4-ի ժ. 10:00-ից մինչև 2022թ. նոյեմբերի 20-ի 23:59 ներառյալ կիրառվելու են

«Shake» Գովազդային վիճակախաղի կանոնների փոփոխված պայմանները:

Սույնով ներկայացվում է «Shake» Գովազդային վիճակախաղի կանոնների նոր խմբագրությունը.

1. Նախաձեռնության անվանումը

«Տեղեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Կազմակերպիչ») My Team AM հավելվածի առաջխաղացման նպատակով անցկացնում է գովազդային վիճակախաղ, որի շրջանակներում «Տեղեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի բջջային կապի ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդները, ինչպես նաև ՀՀ բոլոր օպերատորների բջջային կապի ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդները, որոնք հանդիսանում են My Team AM հավելվածի օգտատերեր՝ կատարելով սույն Կանոնների պայմանները, հնարավորություն են ստանում շահել մրցանակ: Նախաձեռնության խթանումը

կոչվում է «Shake» գովազդային վիճակախաղ, այսուհետև՝ գովազդային վիճակախաղ կամ խաղարկություն:

2. **Գովազդային վիճակախաղի անցկացման ձևը և դրա անցկացման տարածքը**

2.1. Գովազդային վիճակախաղի մասնակցության հնարավորություն են ստանում ՀՀ տարածքում բնակվող՝ ««Տեղեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի բջջային կապի ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդները, ինչպես նաև ՀՀ բոլոր օպերատորների բջջային կապի ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդները, որոնք հանդիսանում են My Team AM հավելվածի օգտատերեր որոնք 2024թ. օգոստոսի 1-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ի 23:59 ներառյալ կկատարեն հետևյալ պայմանները (այսուհետ՝ գովազդային վիճակախաղին մասնակցնելու պայմաններ կամ Կանոնների պայմանները)՝

2.1.1. Պետք է հանդիսանան My Team AM հավելվածի գրանցված օգտատեր:

2.1.2. Հավելվածի Shake բաժնում ծանոթացած լինեն և ընդունեն սույն պայմանները:

2.1.3. Գովազդային վիճակախաղին մասնակցելու համար օգտատերը, մուտք գործելով հավելվածի Shake բաժին, պետք է թափահարի հեռախոսը մինչև 5 վայրկյան ժամանակահատվածով (Կարևոր է իմանալ. Եթե օգտատերը արդեն կատարել է մեկ թափահարում օրվա ընթացքում, կարող է կրկնել գործողությունը միայն հաջորդող օրը, բացառությամբ՝ հավելյալ ծառայության ակտիվացման դեպքում, որը համապատասխան պայմաններով տրամադրում է 1 ԳԲ ինտերնետ և ևս 1 անգամ գովազդայինի վիճակախաղին մասնակցության հնարավորություն մինչև ակտիվացման օրվա ավարտը: Այնուհետև, թափահարելուց հետո հեռախոսի էկրանին տեքստային տարբերակով կստանա ստացված զեղճերի, նվերի, կամ նվերների մասին ծանուցում: Գովազդային վիճակախաղի անցկացման ժամանակահատվածում, բոլոր գովազդային վիճակախաղի մասնակիցները օրը մեկ անգամ, բացառությամբ՝ հավելյալ ծառայության ակտիվացման դեպքում, որը համապատասխան պայմաններով տրամադրում է 1 ԳԲ ինտերնետ և ևս 1 անգամ գովազդայինի վիճակախաղին մասնակցության հնարավորություն օրվա ընթացքում, հնարավորություն են ստանում մասնակցել գովազդայինի վիճակախաղի և շահել մեկ կամ 2 նվեր: **Այլ օպերատորների բաժանորդները շեք գովազդային վիճակախաղի շրջանակում եթե շահեն ՄԲ կամ Բոնուս միավոր, բոլոր միավորները կուտակվելու են: Մինչև շեք գովազդային վիճակախաղի ավարտը իրենց համարով Team բաժանորդ դառնալու դեպքում կարող են ակտիվացնել բոլոր կուտակված ՄԲ-երը 3 օր ժամկետով և Բոնուս միավորները, և օգտագործել այն մինչև 98 % զեղչով յուրաքանչյուր շահած ՄԲ ծավալի դիմած:**

2.2. Չուգահեռ գործելու է ծառայություն, որը համապատասխան պայմաններով (100 դրամի դիմաց) տրամադրում է 1 ԳԲ ինտերնետ և ևս 1 անգամ գովազդայինի վիճակախաղին մասնակցության հնարավորություն օրվա ընթացքում: Ինտերնետ MB-ները տրամադրվում է ակտիվացման օրվանից 3 օր ժամկետով: Գովազդային վիճակախաղում մասնակցելու ընթացքում կարող է ծախսվել սույն կետում նշված 1ԳԲ տրամադրված կամ գործող սակագնային փաթեթի ինտերնետ ծավալներից:

2.3. Չուգահեռ գործելու է՝

«Հաստատիր էլ հասցեն՝ ստացիր հավելյալ շեք»

- բաժանորդները պետք է հաստատեն իրենց էլեկտրոնային հասցեն, որի դիմաց կստանան լրացուցիչ «shake» հնարավորություն (ըստ տրամադրման գործող պայմանների):
- «Շեք» ծառայությունից օգտվող բաժանորդները կտեսնեն ծանուցում (pop-up), որի միջոցով կարող են հաստատել իրենց էլ. հասցեն և այդ օրն ստանալ հավելյալ շեքի հնարավորություն
- Հաստատումը կատարվում է կողի միջոցով, որն ուղարկվում է բաժանորդի էլ. հասցեին
- Այն բաժանորդները, ովքեր կշեղարկեն ծանուցումը, 7 օր հետո կրկին կստանան այն՝ էլ. հասցեն հաստատելու համար
- Այն բաժանորդները, ովքեր կհաստատեն էլ. հասցեն ծանուցումն այլևս չեն ստանա

2.4. Գովազդային վիճակախաղին մասնակցել կարելի է միայն My Team AM հավելվածին հասանելի Android և iOS օպերացիոն համակարգերով աշխատող սմարթֆոնների միջոցով:

2.4.1. Յուրաքանչյուր օր՝ ժամը 00:00:00 համակարգը թարմացվում է և մասնակիցը ստանում է հնարավորություն մասնակցել այդ օրվա խաղարկության փուլին:

2.4.2. Բոլոր մասնակիցները, յուրաքանչյուր անգամ մասնակցելով գովազդային վիճակախաղում ստանում են սահմանված նվերների ցանկից որևէ մեկը կամ երկուսը:

ՈւՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Մասնակիցների կողմից խարդախությունների դեպքերի բացահայտման դեպքում Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում այդպիսի մասնակիցների նկատմամբ իրականացնել

համապատասխան միջոցներ, այդ թվում նաև՝ գրկել նրանց գովազդային վիճակախաղին հետագա մասնակցելու իրավունքից:

3. Գովազդային վիճակախաղի Կազմակերպչի անվանումը

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, Ազատության պողոտա 24/1, 0014 Երևան, Հայաստանի Հանրապետություն:

4. Գովազդային վիճակախաղի անցկացման ժամկետը

- 4.1. Գովազդային վիճակախաղը կանցկացվի Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով մեկ 2024թ. օգոստոսի 1-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ի 23:59
Հունվարի 1-ին ժամը 00:00:00-ին Գովազդային վիճակախաղն ավարտվում է :
- 4.2. Մրցանակները ընտրվում է էլեկտրոնային համակարգի կողմից՝ պատահականության սկզբունքով:

5. Գովազդային վիճակախաղի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները

- 5.1. Գովազդային վիճակախաղի մասնակից կարող են դառնալ ֆիզիկական անձինք, որոնք կատարել են սույն Կանոնների պայմանները:
- 5.2. Գովազդային վիճակախաղին չեն կարող մասնակցել հետևյալ անձինք՝
 - 5.2.1. «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ աշխատակիցները, աշխատակիցների ընտանիքների անդամները և Գովազդային վիճակախաղը կազմակերպող և իրականացնող բոլոր անձինք
 - 5.2.2. Իրավաբանական անձինք
 - 5.2.3. 18 տարին չըրացած անձինք
 - 5.2.4. Գովազդային վիճակախաղում դրա անցկացման ժամանակ չմասնակցած կամ սույն Կանոններով սահմանված պայմանները չկատարած անձինք:
- 5.3. Գովազդային վիճակախաղի գործողության ողջ ժամկետի ընթացքում Գովազդային վիճակախաղի մասնակիցները պարտավոր են հետևել Գովազդային վիճակախաղին մասնակցելու կանոններին, ինչպես նաև կատարել բոլոր գործողությունները՝ կապված մրցանակների տրամադրման և ստացման հետ:
- 5.4. Գովազդային վիճակախաղի մասնակիցների համար Գովազդային վիճակախաղի Կանոնների մասին ամբողջ տեղեկատվությունը հրապարակված է www.telecomarmenia.am վեբ կայքում:
- 5.5. Գովազդային վիճակախաղի անցկացումը դադարեցնելու դեպքում Կազմակերպիչը պարտավոր է www.telecomarmenia.am պաշտոնական աղբյուրում հրապարակել տեղեկություն Գովազդային վիճակախաղի անցկացման դադարեցման մասին կամ այլ եղանակով հրապարակայնորեն ծանուցել նման դադարեցման մասին:
- 5.6. Գովազդային վիճակախաղի Կազմակերպիչը պարտավոր է ավարտել Գովազդային վիճակախաղի անցկացումը, այդ թվում իրականացնել մրցանակների տրամադրումը և կատարել այլ անհրաժեշտ գործողություններ Գովազդային վիճակախաղի մասնակիցների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ Գովազդային վիճակախաղի դադարեցումը կամ ընդհատումը պայմանավորված է գործողություններով կամ իրադարձություններով, որոնք դուրս են Կազմակերպչի վերահսկողությունից:
- 5.7. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Գովազդային վիճակախաղի մասնակիցների՝ այդ թվում նաև հաղթող ճանաչված անձանց առջև, Կազմակերպչի կողմից իր պարտականությունները կատարելու վրա ուղղակիորեն ազդող և դրանց կատարումն անհնարին դարձնող ֆորս-մաժորային իրավիճակների առաջացման համար՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով պատերազմներ, ահաբեկչական գործողություններ, ջրհեղեղներ, հրդեհներ, գործադուլներ, երկրաշարժեր կամ այլ բնական աղետներ, համաճարակներ, պետական մարմինների կարգադրումներ և այլ օբյեկտիվ պատճառներ, որոնք կախված չեն Կազմակերպչից:
- 5.8. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում մասնակցի կողմից հեռախոսի թափահարման արդյունքում հեռախոսի վնասման, ոչնչացման, վերածվող կամ չվերածվող որակի խախտումների կամ այլ խնդիրների համար: Թափահարման անիմացված օրինակը բերված է սույն փաստաթղթի վերջին հատվածում:
- 5.9. Կազմակերպիչը, աշխատակիցները, ինչպես նաև Կազմակերպչի գործակալները և դիլերները պատասխանատվություն չեն կրում բջջային կապի ծառայությունների մատուցման Պայմանագրով բաժանորդի և My Team AM հավելվածի օգտագործողի միջև Գովազդային վիճակախաղի հարցերին վերաբերող տարաձայնությունների առաջացման դեպքում, ներառելով, սակայն չսահմանափակվելով Գովազդային վիճակախաղին մասնակցությունը, մրցանակների շահումը և այլն: Գովազդային վիճակախաղի մասնակցներով՝ բջջային կապի ծառայությունների մատուցման Պայմանագրով բաժանորդ չհանդիսացող My Team AM

հավելվածի օգտատերը հավաստիացնում է, որ ստացել է բջջային կապի ծառայությունների մատուցման Պայմանագրով բաժանորդի Գովազդային վիճակախաղում մասնակցություն և մրցանակ շահելու համաձայնությունը:

- 5.10. Գովազդային վիճակախաղի Կազմակերպիչն իրավունք չունի Գովազդային վիճակախաղի մասնակիցների մասին տեղեկատվությունը տրամադրել երրորդ անձանց, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոններով նախատեսված դեպքերի:
- 5.11. Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում նամակագրության կամ այլ կոնտակտների մեջ չմտնել Գովազդային վիճակախաղի մասնակիցների հետ, բացի սույն Կանոններում նշված կամ ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան դեպքերից:
- 5.12. Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում մասնակցին գրկել մրցանակից, եթե առկա են ապացույցներ, որ տվյալ մասնակիցը խախտել է ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոններով սահմանված նորմերը: Նման դեպքերում Կազմակերպիչը մրցանակի հետ իր հայեցողությամբ վարվելու իրավունք է վերապահում:

6. Գովազդային վիճակախաղի մասնակցության և մրցանակների տրվելու կարգը, հաղթողների որոշման ալգորիթմը

- 6.1. Գովազդային վիճակախաղի մասնակցելու համար անհրաժեշտ է կատարել սույն Կանոնների պայմանները:
- 6.2. Գովազդային վիճակախաղի մասնակցություն պայմանները կատարելուց անմիջապես հետո մասնակիցը դառնում է Գովազդային վիճակախաղի մասնակից՝ համաձայն սույն Կանոններով սահմանված կարգի:
- 6.3. Գովազդային վիճակախաղին գրանցվելը նշանակում է, որ մասնակիցը լիովին համաձայն է Գովազդային վիճակախաղի սույն Կանոնների հետ: Գովազդային վիճակախաղին մասնակցելով՝ մասնակիցը տալիս է Կազմակերպիչին Գովազդային վիճակախաղի մասնակցություն, անհրաժեշտության դեպքում՝ մրցանակը ստանալու համար անհրաժեշտ իր անձնական տվյալները Կազմակերպիչի կողմից մշակելու համաձայնությունը՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կայքում գետեղված [Գաղտնիության քաղաքականության](https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy/) համաձայն (<https://www.telecomarmenia.am/hy/privacy-policy/>)
- 6.4. Մրցանակներ շահած մասնակիցները Կազմակերպիչի խնդրանքով համաձայնում են մասնակցել հարցազրույցին և/կամ ֆոտո/վիդեո նկարահանումներին, որոնք անցկացվում են գովազդային նպատակներով և կապված են Գովազդային վիճակախաղին մասնակցելու հետ:
- 6.5. Գովազդային վիճակախաղի մրցանակային ֆոնդ
- 6.5.1. Գովազդային վիճակախաղի մրցանակային ֆոնդը ձևավորվում է Գովազդային վիճակախաղի Կազմակերպիչի սեփական միջոցների հաշվին և առանձին սահմանվում մինչ Գովազդային վիճակախաղի սկիզբը: Գովազդային վիճակախաղի մասնակիցը յուրաքանչյուր օր մասնակցելով կարող է ստանալ ստորև ներկայացված մրցանակներից մեկը:

№	Մրցանակի անվանումը	Մրցանակների քանակը*	Խաղարկման սկզբունք
1	Smart Watch	133	Հեռախոսի թափահարման արդյունքում
2	Բարձրախոս	33	Հեռախոսի թափահարման արդյունքում
3	Անլար ականջակալ	1888	Հեռախոսի թափահարման արդյունքում
4	Անլար մեծ ականջակալ	70	Հեռախոսի թափահարման արդյունքում
5	Samsung A24	1	Հեռախոսի թափահարման արդյունքում
6	Էլ. ինքնագնաց (HIPER Wing)	2	Հեռախոսի թափահարման արդյունքում
7	Powerbank	481	Հեռախոսի թափահարման արդյունքում
8	Xiaomi Redmi Note 12	2	Հեռախոսի թափահարման արդյունքում
9	Էլ. ինքնագնաց (KickScooter A6)	4	Հեռախոսի թափահարման արդյունքում
10	Ռոբոտ փոշեկուլ (Kyvol E20)	1	Հեռախոսի թափահարման արդյունքում

11	Honor X6	1	Հեռախոսի թափահարման արդյունքում
12	Հեռուստացույց TCL	1	Հեռախոսի թափահարման արդյունքում
13	Սմարթֆոն	4	Հեռախոսի թափահարման արդյունքում
14	Փոշեկուլ Dyson	1	Հեռախոսի թափահարման արդյունքում
15	Ninebot ինքնագնաց	1	Հեռախոսի թափահարման արդյունքում
16	AirPods	1	Հեռախոսի թափահարման արդյունքում
17	Սմարթ ժամացույց Honor Watch GS3 Blue	1	Հեռախոսի թափահարման արդյունքում
18	Miko ռոբոտ	1	Հեռախոսի թափահարման արդյունքում
19	Ֆոտոպարատ Instax	3	Հեռախոսի թափահարման արդյունքում
20	Փոշեկուլ Robot VC Kyvol D6	1	Հեռախոսի թափահարման արդյունքում
21	Կոնսոլեր կտոր	1	Հեռախոսի թափահարման արդյունքում
22	Սակագնային փաթեթ 50% զեղչով***	Ըստ մասնակիցների քանակի	Հեռախոսի թափահարման արդյունքում
23	Մինչև 98 % զեղչով Ինտերնետ տրաֆիկ 50-500MB**	Ըստ մասնակիցների քանակի	Հեռախոսի թափահարման արդյունքում
24	Բոպեներ ցանցի ներսում և այլ ցանցեր հարմարավետ գնով	Ըստ մասնակիցների քանակի	Հեռախոսի թափահարման արդյունքում
25	Team բնուս համակարգի 20-50 միավոր	Ըստ մասնակիցների քանակի	Հեռախոսի թափահարման արդյունքում
26	Karapp promo code *****	Ըստ մասնակիցների քանակի	Հեռախոսի թափահարման արդյունքում
27	Շեյք պրոմոկոդ *****	Ըստ մասնակիցների քանակի	Հեռախոսի թափահարման արդյունքում
28	MobiBattle պրոմոկոդ	Ըստ մասնակիցների քանակի	Հեռախոսի թափահարման արդյունքում

Ամեն ամսվա խաղարկվող նվերների ցանկը կիրառարակվի www.telecomarmenia.am/shake կայքում

*Նշված է տրվող մրցանակների գումարային քանակը:

** Ինտերնետ տրաֆիկ 50-500MB – տրամադրվում է մինչև 98% զեղչով, տրման օրվանից 3 օր ժամկետով:

ՄԲ-ի ծավալ	Գին	Չեղչ %	Չեղչված գին (ներառյալ ԱԱՀ)
50	5	80	1
100	10	90	1
150	15	93,3	1
200	20	95	1
300	30	96,7	1
500	50	98	1

*** Առաջարկը գործում է տրման օրվանից 30 օր ժամկետով: Չեղչը գործում է ակտիվացման պահից մեկ ամիս

Փաթեթ	Գին	Չեղչ %	Չեղչված գին (ներառյալ ԱԱՀ)
Befree 2000	2000	50	1000
Befree 3000	3000	50	1500
Befree 5000	5000	50	2500
Befree 8000	8000	50	4000

***** Ակտիվացնելուց հետո գործում է 31 օր ժամկետով

***** Shake Promo Code-ը գործում է տրման օրվանից 3 օր ժամկետով: Ակտիվացնելով բաժանորդը հնարավորություն է ստանում ևս մեկ անգամ շեյքելու: Յուրաքանչյուր Promo Code հնարավոր է օգտագործել 1 անգամ:

6.5.2. Մրցանակները չեն տրամադրվելու համարժեք դրամով:

6.6. Գովազդային վիճակախաղի մրցանակներ շահողների որոշման և մրցանակների տրամադրման կարգ

6.6.1. Սույն Կանոնների 6.5.1. կետում նշված մրցանակային ֆոնդի խաղարկությունը իրականացվում է պատահականության սկզբունքով գովազդային վիճակախաղում բոլոր մասնակիցների միջև՝ Կազմակերպչի կողմից մշակված ծրագրային ապահովման միջոցով և սույն Կանոններին համաձայն:

6.6.2. Գովազդային վիճակախաղի մեկ մասնակից յուրաքանչյուր օր կարող է շահել միայն մեկ ֆիզիկական մրցանակ:

7. Մրցանակների ստացման կարգը, ժամկետներն ու վայրը

7.1. Մրցանակը ստանալու համար հաղթող մասնակիցը պետք է ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ:

7.1.1. Մրցանակների հանձնման վայրը՝ հավելվածի միջոցով բաժանորդի կողմից ընտրված Վաճառքի և Սպասարկման գրասենյակ:

7.1.2. Մրցանակների հանձնման օրը՝ հաղթողները կարող են ստանալ մրցանակները գրասենյակի հասցեն ընտրելուց 14 օր հետո ընտրված գրասենյակից

7.1.3. Մրցանակների հանձնման/ստացման փաստը. Մրցանակը համարվում է հանձնված/ստացված սույն Կանոնների կից թիվ 1 Հավելվածով սահմանված ձևը մասնակցի կողմից ստորագրման պահից:

7.1.4. Մրցանակ ստանալու պահից մրցանակի պատահական կորստի/վնասի/ոչնչացման ռիսկը անցնում է մասնակցին:

7.1.5. Հաղթող մասնակիցը նվերը կարող է ստանալ, գրասենյակի հասցեն ընտրելու օրվանից 1 ամսվա ընթացքում, հակառակ դեպքում շահումը կճանաչվի անվավեր

8. Բողոքները և դրանց վավերականության ժամկետը

8.1. Գովազդային վիճակախաղի վերաբերյալ ցանկացած բողոք պետք է ուղղել «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ Հաճախորդների օպերատիվ սպասարկման կենտրոն 0611 հեռախոսահամարով կամ գրելով Ֆեյսբուքյան էջին այն ժամանակահատվածում, որին վերաբերում է բողոքը: Բողոքի գրանցման ամսաթիվ է համարվում Սպասարկման կենտրոն կատարված զանգի/ ուղարկված նամակի ամսաթիվը:

8.2. Մասնակիցը պետք է մանրամասն ու մատչելի ներկայացնի բողոքի բովանդակությունը: Բողոքում պետք է նշված լինի մասնակցի անուն, ազգանուն, հայրանունը, կոնտակտային հեռախոսահամար և այն հեռախոսահամարը, որով բաժանորդը մասնակցել է Գովազդային վիճակախաղի, ինչպես նաև մասնակցի էլեկտրոնային հասցեն՝ նրա բողոքին պատասխանելու համար:

8.3. Բոլոր բողոքները կքննարկվեն՝ Կազմակերպչի կողմից դրանք ստանալու օրվանից սկսած 15 աշխատանքային օրվա ընթացքում:

8.4. Կազմակերպիչը դիտարկում է բողոքները՝ հիմնվելով սույն Կանոնների վրա:

8.5. Բողոքի առարկայի վերաբերյալ Կազմակերպչի որոշումը վերջնական է: Մասնակիցը Կազմակերպչի որոշման մասին կտեղեկացվի հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ այլ միջոցով:

8.6. Կազմակերպիչը, օգտագործելով իր տեխնիկական միջոցները, ապահովում է ծառայությունների և համակարգի մշտական աշխատանքը՝ պահելով այն բարձր մակարդակի վրա: Այդուհանդերձ, Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում այն խնդիրների համար, որոնք հնարավոր չէ վերացնել, չնայած որ դրա համար ձեռնարկվել են բոլոր հնարավոր միջոցները: Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում հեռախոսային սարքավորումների աշխատանքի և երրորդ անձանց գործողությունների համար:

8.7. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Գովազդային վիճակախաղի մրցանակ շահած մասնակցի մեղքով մրցանակը ստանալու հնարավորության բացակայության համար, և նման դեպքերում Կազմակերպիչը մրցանակի հետ իր հայեցողությամբ վարվելու իրավունք է վերապահում:

8.8. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում այն իրավիճակների համար, երբ Գովազդային վիճակախաղի մասնակցության համար կատարվող գործողությունները կատարվում են սույն Կանոնների խախտմամբ:

- 8.9. Մասնակիցները հասկանում և համաձայնում են, որ սեփական ռիսկով են մասնակցում Գովազդային վիճակախաղի:
- 8.10. Կազմակերպիչը ոչ մի պատասխանատվություն չի կրում այն դեպքում, եթե մասնակիցը Գովազդային վիճակախաղի մասնակցելու և մրցանակը շահելու նպատակով խոշոր գումար ծախսելու ինքնուրույն որոշում կայացնի:
- 8.11. Կազմակերպիչը իրավունք է վերապահում Գովազդային վիճակախաղի անցկացման սույն Կանոններում փոփոխություններ կատարել՝ համապատասխան տեղեկատվություն հրապարակելով www.telecomarmenia.am կայքում: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:
- 8.12. Բոլոր վեճերն ու տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ պետք է լուծվեն ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:
- 8.13. Հաղթող մասնակիցը նվերը կարող է ստանալ, շահման օրվանից 1 ամսվա ընթացքում, հակառակ դեպքում շահումը կճանաչվի անվավեր:



Ակտ հանձնման-ընդունման

Ամսաթիվ՝ _____
Հանձնման ամսաթիվ

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ընկերությունը, ի դեմս ՎՍԿ ավագ մասնագետ՝ _____, ով գործում է թիվ 180/21 հրամանի հիման վրա, մի կողմից (այսուհետ՝ «Տելեկոմ Արմենա»), և _____, մյուս կողմից, կնքեցին սույն ակտը հետևյալի մասին.

1. «Տելեկոմ Արմենիա»-ն անհատույց հանձնել, իսկ _____ ընդունել է հետևյալ ապրանքները՝ ըստ ստորև ներկայացված ցանկի.

Նյութերի, ապրանքների անվանում	Ծածկագիր	Գործարանային համար	Չափման միավոր	Քանակ
			հատ	1

2. Սույն ակտի 1-ին կետում թվարկված ապրանքները հանձնվել են պատշաճ վիճակում, ժամանակին և առանց թերությունների:
Հանձնեց՝ **Ընդունեց՝**

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
 Հասցե՝ Երևան, Ազատության պողոտա, 24/1
 ՀՎՀՀ 02500052
 ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ԲԲԸ
 Հ/Հ 1570004866030100

Ստացողի անուն ազգանուն՝ _____
 Անձնագրի տվյալներ՝ _____
 Գրանցման հասցե՝ _____
 Հեռախոսահամար՝ _____

աշխատակցի ստորագրություն և գրասենյակի կնիք

Ստացողի ստորագրություն